Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 01-03-2022 թ. որոշմամբ
««ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00136
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2003-06-13
1.5 ՀՎՀՀ-ն		02568189
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)93428010
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		armenbux@mail.ru
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Գագիկ Ծառուկյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Գագիկ Ծառուկյան		
Ռոզա Ծառուկյան		
Ջավահիր Ծառուկյան		
Սեդրակ Առուստամյան		
Դավիթ Մանթաշյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Անահիտ Ծառուկյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	4	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Աբովյան քաղաքի «Սուրբ Հովհաննես Մկրտիչ» եկեղեցու սպասարկման ծախսեր	9,450,805
	Վարձակալական ծախսեր	7,050,000

	Վարչակառավարչական ծախսեր	2,708,317
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Վարչակառավարչական ծախսեր	876,000
	Աջակցություն Զրառատ բարեգործական կազմակերպությանը	1,500,000
	Գյուղ.նշանակության պոմպերի նվիրաբերություն Արմավիրի մարզի գյուղացիներին	2,500,000
	Աբովյան քաղաքի «Սուրբ Հովհաննես Մկրտիչ» եկեղեցու սպասարկման ծախսեր	1,023,130
	Նյութական աջակցության ցուցաբերում Զարկ Մեդիա ՍՊԸ-ին	1,500,000
	Նյութական աջակցության ցուցաբերում <<Միթի օֆ Սմայլ/ Ժպիտների քաղաք>> ԲՀ -ին	5,000,000
	Նյութական աջակցության ցուցաբերում Կոտայքի թեմի առաջնորդարանին	800,000
	Ուսանողի տարեկան ուսման վարձավճարի արժեք	500,000
	Վարչակառավարչական ծախսեր	1,765,674
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
	Շինանյութ	20,368,944
	Գյուղատնտեսական պարարտանյութ	8,470,000
	Գյուղատնտեսական տեխնիկա	8,320,747
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Նվիրաբերություն Աբովյան քաղաքի «Սուրբ Հովհաննես Մկրտիչ» եկեղեցու սպասարկման ծախսերի համար	10,473,935	
Նվիրաբերություն Մաքրավանք վանական համալիրի գլխավոր եկեղեցու վերականգնման աշխատանքների համար	20,368,944	
Նվիրաբերություն Զրառատ բարեգործական կազմակերպությանը աջակցելու համար	1,500,000	
Գյուղ.նշանակության պոմպերի նվիրաբերություն Արմավիրի մարզի գյուղացիներին	2,500,000	

Digitally signed by SIMONYAN ARMEN 2109590270
Date: 2022.04.20 18:14:22 AMST

Նվիրաբերություն Զարկ Մեդիա ՍՊԸ-ին աջակցություն ցուցաբերելու համար	1,500,000
Նվիրաբերություն <<Սիթի օֆ Սմայլ/ Ժպիտների քաղաք>> ԲՀ -ին աջակցություն ցուցաբերելու համար	5,000,000
Նվիրաբերություն Կոտայքի թեմի առաջնորդարանին նյութական աջակցություն ցուցաբերելու համար	800,000
Նվիրաբերություն ուսանողի տարեկան ուսման վարձավճարի վճարման նպատակով	500,000
Նվիրաբերություն Արագածոտնի մարզի բնակչին գյուղ.տեխնիկայի անհատույց տրամադրում	8,320,747
նվիրաբերություն գյուղացիական տնտեսություններին պարարտանյութի անհատույց տրամադրում	8,470,000
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	71,833,617
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	59,433,626

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___3___թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

12. Ծրագրի ծախսեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աբովյան քաղաքի «Սուրբ Հովհաննես Մկրտիչ» եկեղեցու սպասարկման ծախսեր	10,473	10,213
Նվիրաբերություն Արագածոտնի մարզի բնակչին գյուղ.տեխնիկայի անհատույց տրամադրում	8,321	-
Նվիրաբերություն գյուղացիական տնտեսություններին պարարտանյութի անհատույց տրամադրում	8,470	-
Նյութական աջակցության ցուցաբերում "Սիթի օֆ Սմայլ/ Ժպիտների քաղաք" ԲՀ -ին	5,000	-
Գյուղ.նշանակության պոմպերի նվիրաբերություն Արմավիրի մարզի գյուղացիներին	2,500	-
Նվիրաբերություն Ջրառատ բարեգործական կազմակերպությանը աջակցելու համար	1,500	-
Նյութական աջակցության ցուցաբերում Զարկ Մեդիա ՍՊԸ-ին	1,500	-
Նյութական աջակցության ցուցաբերում Կոտայքի թեմի առաջնորդարանին	800	-
Նվիրաբերություն Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմին	-	21,500
Գյուղատնտեսական պարարտանյութի նվիրաբերություն ՀՀ մարզերի գյուղական համայնքներին	-	37,599
Նվիրաբերություն Գյումրու ինֆեկցիոն հիվանդանոցին, կորոնավիրուսով վարակված հիվանդների բուժման և բուժաշխատողներին պարգևատրելու համար	-	15,000
Նվիրաբերություն Նորք ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցին, կորոնավիրուսով վարակված հիվանդների բուժման և բուժաշխատողներին պարգևատրելու համար	-	45,000
Նվիրաբերություն Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը, Լիբանանի հայ համայնքին աջակցելու համար	-	97,104
Ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցում	500	1,000
Այլ	-	5,014
	39,064	232,430

13. Այլ ծախսեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցում աշխատակիցներին	4,072	3,460
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	42,006	41,960
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	600	600
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	628	172
Բանկային ծախսեր	10	67
Դեբիտորական պարտքերի պահուստ	42,820	-
Այլ ծախսեր	7,201	21,643
	97,337	67,902

14. Ֆինանսական գործիքներ

14.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.5-ում:

14.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	42,820
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	11	10
	11	42,830

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Ստացած փոխառություններ	4,290	4,290
Առևտրային կրեդիտորական պարտքեր	464	10,730
	4,754	15,020

15. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

15□1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Հիմնադրամի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին (տես՝ բ) ստորև):

բ) Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն կարող է առաջանալ Հիմնադրամի ստացված շնորհներից, դեբիտորական և կրեդիտորական պարտքերից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

16. Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

17. Պայմանական պարտավորություններ

17.1 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Տնտեսական անբարենպաստ պայմանները և ներդրումների ցածր մակարդակը բացատրվում են նաև 2020թ.-ին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած ռազմական բախումներով և դրանց հաջորդած հրադադարի ռեժիմի պայմանագրերով, ներքաղաքական անկայուն վիճակով և իհարկե նույն տարում ամբողջ աշխարհը ցնցած Չինաստանում բռնկված կորոնավիրուս (COVID-19) համավարակով՝ պետությունների կառավարությունների կողմից սահմանված կրկնակի արգելափակումներով:

2020թ.ի մարտի 11-ին Առողջապահության Համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) հայտարարեց, որ կորոնավիրուսի տարածումը կարող է բնութագրվել որպես համավարակ: Վիրուսը զգալի ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության վրա: Կազմակերպություններն առնչվեցին կորցրած եկամուտների և խափանված մատակարարման շղթաների խնդիրների հետ: Չնայած նրան, որ որոշ երկրներ փորձեցին մեղմացնել սահմանափակումները՝ մեղմացումները աստիճանական են եղել, և կազմակերպությունների գործունեության ընդհատման արդյունքում միլիոնավոր աշխատակիցներ կորցրեցին իրենց աշխատանքը: Համավարակը զգալի անկայունության հանգեցրեց ամբողջ աշխարհի ֆինանսական և ապրանքային շուկաները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացնում են շարունակական միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներ»:

Ուկրաինական հակամարտությունը նույնպես մեծ ազդեցություն կունենա ամբողջ աշխարհի վրա: Ռուբլու արժեզրկումը ռուբլով արտահայտված դրամական փոխանցումների վրա էական ազդեցություն չի ունենա: Փոխարենը դա կազդի այդ փոխանցումների դոլարային արտահայտության վրա: Բնականաբար ԱՄՆ դոլարով արտահայտված դրամական փոխանցումները որոշակիորեն կնվազեն: Պատմականորեն ՀՀ տնտեսությունը մի քանի անգամ բախվել է նման ցնցումների հետ: Ի տարբերություն նախորդ ժամանակների, ներկայումս Հայաստանի տնտեսությունը շատ ավելի քիչ է կախված դրամական փոխանցումների ծավալներից, իսկ ՌԴ կշիռը այդ դրամական փոխանցումներում զգալիորեն ավելի փոքր է: Կարծում ենք, որ դրամական փոխանցումների որոշակի կրճատումը բացասական կազդի ՀՀ ներքին պահանջարկի վրա, սակայն այդ ազդեցությունը գնահատում ենք ոչ շատ մեծ:

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Գագիկ Ծառուկյան» Բարեգործական Հիմնադրամը (այսուհետ Հիմնադրամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2003թ. հունիսի 13-ին, գրանցման համար՝ 222. 160. 00136:

Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը և Հիմնադրամի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է՝ բաղկացած 5 անդամներից: Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը: Հիմնադրամի գլխավոր տնօրենն է Անահիտ Ծառուկյանը:

Հոգաբարձուների խորհրդի անդամներն են՝

Խորհրդի նախագահ	Գագիկ Ծառուկյան,
Անդամներ	Ռոզա Ծառուկյան,
	Ջավահիր Ծառուկյան,
	Սեդրակ Առուստամյան,
	Դավիթ Մանթաշյան:

Հիմնադրամի հիմնական նպատակն է

- Օժանդակել, հատկապես Կոտայքի տարածաշրջանում, Հայ առաքելական եկեղեցուն, սոցիալապես անապահով և կարիքավոր ընտանիքներին, որբ և ծնողազուրկ երեխաներին, մանկատներին, ծերերին ու հաշմանդամներին, ուսանող երիտասարդությանը, մարզիկներին, գիտության, մշակույթի, գրականության, արվեստի բնագավառներին, կրթական հաստատություններին, առողջապահական հիմնարկներին, արտադրության, ներառյալ, գյուղատնտեսական արտադրության բնագավառում փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց,

2021թ. Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 4 մարդ (2020թ.՝ 4 մարդ):

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Թումանյան 21:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրած հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Դրանք կիրառվել են ներկայացված ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Հիմնադրամի գործառնական արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են չափման սկզբնական արժեքի հիման վրա, բացառությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների օգտագործում

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Հիմնադրամի ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ("ՀՀ ԿԲ") կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը.

Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	480.14	522.59
Եվրո	542.61	641.11

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր. շինություններ /եկեղեցի/	100 տարի,
Մեքենաներ և սարքավորումներ	5-30 տարի
Տրանսպորտային միջոցներ	5 տարի

Արտադրական, տնտեսական գույք	8 տարի:

3.3 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:
Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

3.4 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.5 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնց իրական արժեքի փոփոխությունները վերագրվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

I. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

4. Հիմնական միջոցներ

հազար դրամ	Հողամասեր	Շենքեր/ եկեղեցի	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական տնտեսական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	126,343	308,402	212,153	7,127	4,173	658,198
Ավելացում	-	-	1,289	-	-	1,289
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	126,343	308,402	213,442	7,127	4,173	659,487
Ավելացում	-	-	-	-	-	-
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	126,343	308,402	213,442	7,127	4,173	659,487
Կուտակված մաշվածություն						
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	18,761	99,634	4,158	1,035	123,588
Տարվա ծախս	-	3,075	37,692	753	440	41,960
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	21,836	137,326	4,911	1,475	165,548
Տարվա ծախս	-	3,067	37,749	752	438	42,006
2021թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	24,903	175,075	5,663	1,913	207,554
Հաշվեկշռային արժեք						
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	126,343	286,566	76,116	2,216	2,698	493,939
2021թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	126,343	283,499	38,367	1,464	2,260	451,933

Մաշվածության գծով ծախսը 2021թ. կազմել է 42,006 հազ. դրամ (2020թ. 41,960 դրամ):

5. Պաշարներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք, նյութեր	35,354	25,314
Ապրանքներ	8,537	8,537
	43,891	33,851

6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր վաճառքի գծով	3,360	3,360
Տրված կանխավճարներ	39,460	39,460
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	(42,820)	-
	-	42,820
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	1,890	1,512
	1,890	44,332

Առևտրային դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը: Ղեկավարությունը հավաստացած է, որ ստեղծված կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից զատ լրացուցիչ պահուստ չի պահանջվում:

7. Դրամական միջոցներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	-	8
Բանկային հաշիվներ	11	2
	11	10

8. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	493,939	534,610
Ստացված շնորհներ	-	1,289
Շնորհից եկամուտ	(42,006)	(41,960)
Տարեվերջի մնացորդ	451,933	493,939

9. Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	61,077	62,366
Ստացված շնորհներ	71,834	254,561
Շնորհից եկամուտ	(93,056)	(255,850)
Տարեվերջի մնացորդ	39,855	61,077

10. Ստացված փոխառություններ

Հիմնադրամը 2012թ. հունվարի 25-ին կնքված փոխառության պայմանագրի համարձայն Գագիկ Ծառուկյանից ստացել է 4,290 հազ. դրամ անտոկոս փոխառություն 15 տարի ժամկետով:

11. Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	464	10,730
Ստացված կանխավճարներ	-	-
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	148	76
Աշխատավարձի գծով պարտք	455	101
Արձակուրդի պահուստ	580	1,919
	1,647	12,826

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Հիմնադրամը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:
Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

2021թ. -ին Հիմնադրամը ունեցել է բավարար շրջանառու միջոցներ՝ ի հաշիվ ստացված նվիրատվությունների:

17.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Հիմնադրամն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Հիմնադրամն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

17.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

18 Գործարքներ կապակցված կողմերի միջև

18.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, որի նախագահն է Գագիկ Ծառուկյանը:

Ներկայացվող հաշվետվությունների առումով կապակցված կողմերն են նաև համատեղ հսկողության տակ գտնվող կազմակերպությունները, տնօրենը, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք:

Հիմնադրամն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքները հետևյալն են.

1. Գործարքներ վերջնական հսկողի հետ

Հազար դրամ	Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-դրությամբ	2021թ.	Մնացորդը 2020թ.

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Գագիկ Ծառուկյան» Բարեգործական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գագիկ Ծառուկյան» Բարեգործական Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:
Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե

ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք: Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:
  Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

- «Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
  19 ապրիլի, 2022թ.
  Ք. Երևան

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար

«ԱՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
«AUDIT ARMENIA»
«АУДИТ АРМЕНИЯ»
01569467

«ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	451,933	493,939
		451,933	493,939
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	43,891	33,851
Դեբիտորական պարտքեր	6	1,890	44,332
Դրամական միջոցներ	7	11	10
		45,792	78,193
Ընդամենը ակտիվներ		497,725	572,132
Հիմնադրամին վերագրելի զուտ ակտիվներ		-	-
		-	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ստացված փոխառություններ	10	4,290	4,290
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8	451,933	493,939
		456,223	498,229
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	39,855	61,077
Կրեդիտորական պարտքեր	11	1,647	12,826
		41,502	73,903
Ընդամենը պարտավորություններ		497,725	572,132

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2022թ. ապրիլի 19-ին՝

Գլխավոր տնօրեն

Անահիտ Ծառուկյան

«ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ

	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շնորհից եկամուտ/ ծախս	8, 9	135,062	297,810
Այլ եկամուտ		1,339	-
Ծրագրի ծախսեր	12	(39,064)	(232,430)
Այլ ծախսեր	13	(97,337)	(67,902)
Փոխարժեքային տարբերությունից եկամուտ		-	2,522
Ֆինանսական եկամուտ		-	-
Գործառնական գործունեությունից արդյունք		-	-
Շահութահարկի գծով ծախս		-	-
Տարվա արդյունք		-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	-	-
Ճշգրտումներ		
Շահութահարկի գծով ծախս	-	-
Շնորհից եկամուտ/ ծախս	(135,062)	(297,810)
Մաշվածության ծախս	42,006	41,960
Փոխարժեքային տարբերությունից եկամուտ	-	(2,522)
Դեբիտորական պարտքի պահուստ	42,820	-
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	(50,236)	(258,372)
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	(378)	7,049
Պաշարների փոփոխություն	(10,040)	(12,080)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(11,179)	8,849
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(71,833)	(254,554)
Վճարված շահութահարկ	-	-
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(71,833)	(254,554)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	-	(1,289)
Հիմնական միջոցների ձեռքբերում		
Ստացված տոկոսներ	-	-
Ակտիվներին/եկամուտներին վերաբերող շնորհներ	71,834	255,850
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	71,834	254,561
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառություններից մուտքեր	-	-
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	1	7
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	10	3
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	11	10

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների ամբողջացուցիչ մասը:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 20.04.2022 16:46